**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2016թ. թիվ 84-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. փետրվարի 12-ի թիվ 45-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի իրականացման և ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ծրագիրը և ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 25.03.2016թ. թիվ 2 նիստի արձանագրությունը /կցվում են/՝

Ո ր ո շ ու մ   եմ.

Հաստատել Մեծ Պարնիի համայնքապետարանի կողմից ներկայացված «Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան՝ համալիրի տարածքի բարեկարգում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ                    Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մարտի 29
ք.Վանաձոր